

ՄՈՎՍԷՍ ԿԱՂԱՆԿԱՅՏՈՒԱՑԻ

ՔՆՆՈՒԹԻՒՆ ԱՆՈՐ ԳՐՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՎՐԱՅ

Ա

Խորենացին յիշող պատմագիրներուն մէջ ժամանակագրական կարգով առաջին կը համարուի Մովսէս Կաղանկայտուացի, պատմիչ Աղուան՝ որ կը նկատուի ապրած և երկասիրած եւթներորդ դարուն: Այս Մովսէս իր եռահատոր պատմութեան մէջ (տպ. Փարիզ. Կ. Վ. Շահնագարեան) շատ բան բառացի փոխ կ'առնէ Խորենացիէն, որ ինչպէս առ հասարակ մեր բոլոր պատմագիրներուն միակ ստոյգ, անվիճելի և վաւերական աղբիւրն է մեր պատմութեան հնագոյն ժամանակներուն համար, նոյնպէս ալ Կաղանկայտուացի Մովսէսին՝ Աղուաններու պատմութեան առաջին ժամանակներուն համար:

Փոխառութեան եղանակին համար ահաւաստիկ համեմատական երկու հատուածներ.

ԽՈՐԵՆԱՑԻ

ԿԱՂԱՆԿԱՅՏՈՒԱՑԻ

Եթէ որպէս կարգեաց Վաղարշակ զարեմուտս և զհիւսիսի մերոյ աշխարհիս: — . . . Աստ կոչեցեալ զվայրենի եկամուտ ազգն, որ ի դաշտին հիւսիսոյ և որ զստորոտով մեծի լեռինն Կաւկասոյ, և որ ի հովիտս կամ ի ձորս երկայնագոյն խորացեալս, ի լեռնէն՝ որ զհարաւով իջեալ մինչ ի դաշտաբերանն մեծ. պատուէր տալով զաւազակութիւն և զմարդաբուրութիւն ի բաց քեցել յինքեանց, և հրամանաց և հարկաց արքունի հպատակ լինել. որպէս զի միւսանգամ տեսեալ զնոսա, առաջնորդս և իշխանս հանդերձ զեղեցիկ կարգօք հաստատեցէ: Եւ արձակէ զնոսա հանդերձ արամբք իմաստնովք և վերակացուօք յիւրմէ: (Խոր. Բ. 2.):

Յետ սորա մեծ և անուանի և բազմաբեր զարեւելից հիւսիսոյ կողմանն կարգէ կողմնակալութիւն՝ զայր անուանի և յամենայն գործ մտաւորութեան և հանճարոյ առաջին, զԱռան. առ մեծ գետովն, որ հատանէ զդաշտն մեծ, որ անուանի Կուր: Բայց զայս գիտեա, զի զցեղս զայս մեծ և անուանի՝ մուսցումն եղև մեզ յառաջին մատենին յիշատակել, զգունդս սիսական՝ որ ժառանգեաց զդաշտն Աղուանից, և զլեռնակողմն նորին դաշտի, ի գետոյն Երասա.

. . . Վաղարշակ արքայն Հայոց, . . . ի կարգելն իւրում զհիւսիսայինսն՝ կոչեաց զվայրենի եկամուտ ազգս որ ի դաշտէն հիւսիսոյ կամ որ զստորոտովն Կաւկասու, կամ ի հովիտս կամ ի խորաձորս զհարաւով մինչև ցմուտս դաշտին,

պատուէր առնէր զաւազակութիւն և զմարդաբուրութիւն թողուլ. և հարկաց արքունի հնազանդ կալ:

Ապա կարգեաց նոցա առաջնորդս և վերակացուս, յորոց զլուսաւոր ոմն ի Սիսական տոհմէ Յարեթական ծննդոց կարգի հրամանով Վաղարշակայ Առան անուն,

որ ժառանգեաց զդաշտս և զլեռինս Աղվանից ի գետէն Երասաւայ մին.